

Ս. Խաչ Հայր. Առաք. Եկեղեցի

Հոգեւոր Հովհաննի

Տեղեկատուութիւն

Սիրելի Անդամ եւ Անդամուհիներ,

Նկատի առինք, որ Յարգելի Ատենապետը ծխական Խորհուրդի գործունէութիւններուն մասին, քաւական լայն եւ մանրամասն տեղեկութիւն մը պատրաստած էր, մենք՝ կրկնութիւններէ խուսափելով, միայն պիտի ըսենք, Տիրոջ մեզի տըւած ոյժ եւ կարողութեամբ, մեզի վստահուած պարտականութիւնը կը յուսանք ջանացինք կատարել ըստ կարելւոյն:

Նախագահեցինք ծխական Խորհուրդի ժողովներուն, ներկայ չեղանք միայն այն օրերուն, երբ ստիպողաբար քաղաքէն դուրս կը գտնուէինք: Անխաբան Ս. Պատարագ մատուցինք ամեն կիրակի, ի քացառեալ այն օրերուն որ նշուած է Ատենապետի տեղեկագրութեան մէջ:

Սիրով կատարեցինք մեզմէ խնդրուած բոլոր հոգեւոր պարտականութիւնները եւ ծխակատարութիւնները.


1980 Ապրիլ 30ին, քաղաքիս չորս Հայ Եկեղեցիներուն, նահատակաց Տօնին առթիւ միասնաբար կազմակերպած Ս. Պատարագին բերինք նաեւ մեր մասնակցութիւնը:

Հայ Բար. Ըստ. Միութ. շէնքի անկիւնազարի Օրհնութեան արարողութեան համար եղած հրաւերին բերինք մեր մասնակցութիւնը Հոգ. Տ. Գեղամ ծ. Վրդ. Զաքարեանի հետ միասնաբար:

17 Օգոստոս 1980ին Ս. Աստուածածնայ Տօնին առթիւ Ս. Քաթերինզի Ս. Գ. Լուս. Եկեղեցւոյ, յաւարտ Ս. Անմահ Պատարագին տեղի կունենայ իրենց տարեկան Խաղողի Օրհնութիւնն ու դաշտահանդէսը, Հոգ. Տ. Գեղամ ծ. Վրդ. Զաքարեանի եւ ծխական Խորհուրդի կողմէ դրկուած հրաւերին ներկայ եղանք եւ Պատարագեցինք Ս. Խաչ Հայ. Առաք. Եկեղեցւոյ Դպրաց Դասու քառածայն խումբի մասնակցութեամբ:

Նոյնպէս .16 նոյ. 1980ին Ս. Քաթերինգի Սր. Գ. Լուս. Հայց. Եկեղեցւոյ կառուցման յիսունամեակին առթիւ մատուցուած Ս. Պատարագին եւ հանդիսութեան քերինք մեր մասնակցութիւնը:

Իսկ Ս. Երրղ. Հայ. Առաք. Եկեղեցւոյ 27րդ օծման հանդիսութիւնը զուգաղիպած ըլլալով մեր Ս. Պատարագի ժամերուն հարկադրաբար մեր ներկայութեամբ չի կարողացանք մերը մասնակցութիւնը քերել սոյն հանդիսութեան:


Հոգեւոր Հովհաննեսի